ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ *info@prosecutor.am*

31/8/102/25

«Հետք»-ի լրագրող Տիրայր Մուրադյանին
tirayrmuradyan@gmail.com

Հարգելի՛ պարոն Մուրադյան

Ի պատասխան 2025 թվականի ապրիլի 9-ի՝ 115/41067-2025 հարցման՝ հայտնում եմ, որ հարցմամբ նշվել է, որ ըստ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության (այսուհետ՝ Իրավասու մարմին) կողմից ներկայացված՝ Գագիկ Ծառուկյանին և նրան փոխկապակցված անձանց պատկանող գույքի բռնագանձման հայցադիմումի՝ Տիգրան Սերյոժայի Մանուկյանը հանդիսանում է Գագիկ Ծառուկյանին փոխկապակցված անձ:

Նախ, հարկ է այս մասով ընդգծել, որ Տիգրան Մանուկյանը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի կարգավորման համատեքստում չի համարվում Գագիկ Ծառուկյանին փոխկապակցված անձ: Տիգրան Մանուկյանի դեմ գույքերի բռնագանձման պահանջը ներկայացված է՝ հաշվի առնելով այն, որ նրա անվամբ գրանցված են որոշ գույքեր, որոնց իրական շահառուն է դիտարկվել Գագիկ Ծառուկյանը:

Ինչ վերաբերում է Տիգրան Մանուկյանի անվամբ գրանցված և հայցապահանջում չներառված որևէ գույքին, ապա հարկ է նշել, որ Իրավասու մարմինը Տիգրան Մանուկյանի անվամբ գրանցված ոչ բոլոր գույքերի իրական շահառուն է համարել Գագիկ Ծառուկյանին, վերջինը համարվել է այն գույքերի իրական շահառուն, որոնց՝ Օրենքի իմաստով Գագիկ Ծառուկյանին պատկանելիությունը հիմնավորելու տեսանկյունից

ստացվել են այնպիսի ապացույցներ, որոնց համակցությունը բավարար է գնահատվել Իրավասու մարմնի վկայակոչած փաստերի հաստատման տեսանկյունից:

Հետևաբար, այս պարագայում որևէ գույք ոչ թե դուրս է թողնվել պահանջվող գույքերի ցանկից, այլ Տիգրան Մանուկյանի անվամբ գրանցված այլ գույքերի մասով պահանջ չներկայացնելը պայմանավորված է այդպիսի գույքերի իրական շահառուն Գագիկ Ծառուկյանին համարելու և դրանց ձեռքբերումն ապօրինի որակելու փաստերի վկայակոչման նպատակով վերը նշված ապացույցների անբավարարությամբ կամ բացակայությամբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

4/14/2025

X

ԱՐԵՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN AREVIK 6610880360